



Վարչության նիստ

2022թ. հունիսի 4-ին տեղի ունեցավ Հայ Ատոմատուրգների Միության վարչության նիստ:

Օրակարգում ընդգրկված էր երկու հարց՝

- 1. Սույն թվի հուլիսի 1-ից << Անկանխիկ գործառնությունների մասին>>**
- 2. ՀՀ օրենքի դրույթների կիրառումը և ազդեցությունը ստոմատոլոգիայի ոլորտում**
- 2. Լիցենզավորված անձանց կողմից Էլեկտրոնային առողջապահության համակարգում տվյալների մուտքագրման ընթացակարգի վերաբերյալ 28 դեկտեմբերի 2021թ. N 99-Ն ԱՆ նախարարի հրամանի քննարկում:**

Առաջին հարցի շուրջ Ելույթ ունեցավ ՀՍՍ նախագահ Գ.Քալանթարյանը: Նա ծանոթացրեց ՀՀ վարչապետի աշխատակազմին և Առողջապահության նախարարին ուղղված նամակներին և ֆինանսների փոխնախարարի՝ հետադարձ նամակի պատասխանին: Փաստացի մեր խնդրանքը, որպեսզի անկանխիկ գործառնությունների հետ զուգահեռ թույլատրվեր մինչև 300000 կանխիկ վճարումներ՝ մերժվել էր: Ի դեպ, մեր նամակին միացել էին նաև մի շարք ասոցիացիաներ: Երկրորդ հարցի կապակցությամբ հրավիրվել էին <<Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր >>ՓԲԸ (Արմեդ) տնօրեն Ավետ Մանուկյանը և Գործառնական բաժնի ղեկավար Գեորգի Ասատրյանը: Ելույթ ունեցավ ՀՍՍ փոխնախագահ Թ.Դաշտոյանը: Քննարկվեց ոլորտի մասնագետների համագործակցությունը Արմեդի հետ: ՀՍՍ -ն մշտապես դրական է գնահատել այս հարթակը: Բարձրաձայնվեց օրենսդրության այն խնդիրները, որոնք խոչընդոտում են մասնագետների գրանցումը համակարգին: Մասնավորապես խոսքը գնում է գործող լիցենզավորման կարգին, որի դրույթների վերանայումը դարձել է խիստ անհրաժեշտ և արդիական: Որոշվեց շարունակել ՀՍՍ և Էլեկտրոնային Առողջապահության Ազգային Օպերատորի միջև սկսված համագործակցությունը: